

ԲԱՐԴ ԲԱՌԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԴՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ռ. Խ. ՄԿՐՏՁՅԱՆ

Հա՛, լեզվաբանական գրականության մեջ բարդ բառերը սահմանվում են որպէս մեկից ավելի արմատներից կազմված բառեր: Այդ սահմանումը էական փոփոխություն չի կրել սկսած Դ. Թրակացու մեկնիչներից մինչև մեր օրերը: Սակայն նշված սահմանումը միակողմանի է. այդտեղ փաստորեն հաշվի չեն առնվում եղած կաղապարների նմանակութամբ կազմված բարդությունները, և դրանք դիտվում են սոսկ որպէս մեկից ավելի արմատների զուգադրումից առաջացած բառեր: Ծիշտ է, բառապաշարի մեջ զգալի տեղ են գրավում սովորական շարահյուսական կապակցություններից առաջացած բարդությունները, ինչպես՝ վրեժ առնել-վրիժառու, այս օր-այսօր, հոր եզրայր-հորեղբայր, փայլ և արի-փաշարի և այլն, սակայն սրանց կողքին քիչ չեն այն բարդ բառերը, որոնք առաջացել են արդեն եղած կաղապարների նմանակութամբ: Այսպես, օրինակ, մարդաշատ բարդության կաղապարով կարող են կազմվել այլ բարդ բառեր, ինչպես՝ կանաչաշատ, փարաշատ, մրգաշատ և այլն:

Բարդության կազմի մեջ մտնող արմատները (հիմնական ձևւոյթները) ինքնուրույնության առումով բազմազան են: Դրանց մի մասը կարող է արտահայտել կոնկրետ, ավարտված իմաստ և ունենալ ինքնուրույն բառային գործածություն: Ինչպես՝ սուզանավ, բարձրագագաթ, տերևախիտ, փարաքեկուր և այլ բարդություններում նշվ, գագաթ, բարձր, տերև, խիտ, փար, քեկուր բաղադրիչները: Իսկ արմատների մի մասը միայն ընդհանուր նյութական իմաստ է արտահայտում, ինքնուրույն բառային գործածություն չունի և միշտ հանդես է գալիս ուրիշ ձևւոյթների հետ միասին: Դրանք, փաստորեն, կորցրել են իրենց բառական ինքնուրույնությունը և հանդես են գալիս միայն բաղադրություններում. ինչպես՝ գրսվանառ, ձեռնամուխ, մանրագլին, հոգեզմայլ, վարձանատույց, իրարու մերժ, ուժասպառ, կարկաչաճուս, հոգնատանջ, ինքնաբուխ, տերևաթափ և այլն բարդ բառերի վանառ, մուխ, գլին, զմայլ, ճատույց, մերժ, սպառ, ճուս, տանջ, բուխ, թափ բաղադրիչները:

Վերևում նշված ինքնուրույն, անկախ բառային գործածություն ունեցող հիմնական ձևւոյթները արմատական բառեր են, իսկ վերջինները՝ սոսկ արմատներ:

Բառի ածման դեպքում արմատական բառը կարող է հնչյունափոխվել (ջրմուղ, շնագայլ, գրագետ): Ի դեպ, պետք է նշել, որ նույն արմատական բառը տարբեր բարդություններում կարող է հանդես գալ ինչպես հնչյունափոխված, այնպես էլ չհնչյունափոխված ձևերով: Ինչպես, օրինակ՝ ջրմուղ. մասջուր, շնագայլ, ջրշուն, սրտաբեկ, առյուծասիրտ, հնգամյա, տասնհինգ և այլն:

Այսպիսի դեպքերում գործ ունենք արմատների և նրանց հնչյունափոխված ձևերի՝ արմատների տարբերակների հետ: Արմատի տարբերակը բարդ բառերի մեջ կարող է հանդես գալ բառասկզբում, բառամիջում, բայց ոչ բառավերջում: Ինքնին հասկանալի է, որ արմատի տարբերակը անկախ բառային գործածություն չունի:

Բայց երբ բարդությունն առաջին եզրի վերջին վանկի ձայնավորներն են ա, ո, ե (գրաբարյան ե) հնչյունները, ապա բառի ածման դեպքում դրանք չեն փոխվում, ինչպես՝ գահաժառանգ, դարագլուխ, հաղագործ, ցաղաթաթախ, մեծապատիվ, հեռատես և այլն:

Այս երևույթը բացատրվում է նրանով, որ արդի հայերենում ա, ո, ե (գրաբարյան ե) ձայնավորները, որպես կանոն, չեն հնչյունափոխվում: Հետևաբար, վերջին վանկում նշված ձայնավորներն ունեցող արմատները հանդես են գալիս չհնչյունափոխված ձևով և չունեն տարբերակներ:

Հայ լեզվաբանության մեջ ընդունված է բարդ բառերն ըստ բաղադրության հղանակի բաժանել երկու տեսակի՝ իսկական և անիսկական: Անիսկական բարդությունների մեջ խմբավորվում են կցական, հարադրական և կրկնավոր բարդությունները: Հարադրականի մի առանձին տեսակն են բաղճյուսական հարադրությունները:

Իսկական բարդությունները բնութագրվում են հետևյալ հատկանիշներով:

1. Նրանց բաղադրիչները միշտ լինում են միացած. օրինակ՝ հրացան, քղթադրամ, քաժականառ, ֆաբրիկոր, պայծառաղեմ և այլն: Սակայն կառուցվածքային այս հատկանիշն ունեն նաև կցական բարդությունները. ինչպես՝ աղղուզաղ, տասնվեց, կեսօր, մեկտեղ, ծայրեծայր, հոբեղբայր և այլն:

Անիսկական բարդության մյուս տեսակների (հարադրականների ու կրկնավորների) բաղադրիչները հանդես են գալիս անջատ, իրարից բաժանվում են զգալի արտասանական դադարով, պահպանելով իրենց ձևական անկախությունը, որը դրավոր խոսքում արտահայտվում է մի դեպքում, բաղադրիչների անջատ դրվելով (դուրս դալ, սիրտ տալ, երես տալ), մյուս դեպքում՝ միացման գծիկով (մեծ-մեծ, սուր-սուր, առատ-առատ):

2. Իսկական բարդության ամենաբնորոշ առանձնահատկությունը նոր իմաստ արտահայտելն է. այսինքն՝ բառը ստանում է մի այնպիսի նոր իմաստ, որ նրա բաղադրիչները չունեն առանձին-առանձին և բարդության արտահայտած իմաստը չի ստացվում նրա բաղադրիչների իմաստի մեխանիկական գումարից: Օրինակ՝ փայտահատ չի նշանակում փայտ և հատել, այլ՝ մի անձնավորություն, որը փայտ է կտրում, մայրամուտ չի նշանակում մայր և մտնել, այլ՝ սրեկի մայր մտնելը, սեղանատամ՝ տափակ մակերևույթով ատամ, որով մանրում և ծամում են կերակուրը, տառակեր՝ նա, որ հետևում է օրենքի կամ ընդհանրապես խոսքի միայն տառացի իմաստին, մի բառի պոչից է բռնում, անտես է անում ընդհանուր ոգին¹:

Քանն այն է, որ իսկական բարդությանը բնորոշ՝ բաղադրիչների անկախ ինքնուրույն իմաստի չպահպանելը, իմաստից ավելի, նոր իմաստ արտահայտելը ի հայտ է գալիս նաև անիսկական բարդությունների գերակշռող մասում. կսկիծ² (1. սուր ցավ մարմնի որևէ մասում. 2. դառն, սիրտ մաշող վիշտ): Իսկ կսկիծ բարդությունն առաջացել է կիծ-կիծ ձևից, որից կծկիծ>կսկիծ՝ տարնմանության հետևանքով, քաբքառ առաջացել է քառ-ի կրկնությամբ՝ բառ բառ>բարբառ, որտեղ տարնմանությամբ՝ ո>ր նշանակում է ընդհանուր լեզվի տերիտորիալ ձյուղավորումը, կկու (թռչունի տեսակ), քել-քել (թելերի բաժանված, առանձին-առանձին), երեխա-երեխա (միամտաբար, թեթևամիտ): Արև-

¹ ՄՀայերեն բացատրական բառարան, հ. 4, էջ 376:

² Նույն տեղում, հ. 2, էջ 494:

մըտահայերենում հոս նշանակում է այստեղ, իսկ նուսնոս՝ թեթևամիտ։ Թեև, հոս, երեխա բառերի կրկնությամբ կազմված բարդություններում կատարվել է իմաստային անցում առարկայի գաղափարից հատկանիշի գաղափարին։ Սովորաբար կրկնավորներին և նրանցից կազմված կցականներին հատուկ է իմաստային տարբեր երանգավորումներ առաջացնելը (բառիմաստի սաստկացում՝ մեծ-մեծ, հոգնակիություն՝ մառդ-մառդ, գործողության բազմակիություն՝ թռվռալ, վազվզել, բաշխում՝ մեկ-մեկ)։ Բացի դրանից, ինչպես վերոհիշյալ բարդություններում, նրանք կարող են արտահայտել նոր իմաստներ, իսկ նոր իմաստներ առաջացնել հատուկ է իսկական բարդություններին։ Բայց, ինչպես տեսանք, նշված անիսկական բարդությունները նույնպես արտահայտում են նոր իմաստներ։ Այդպես են նաև այբ ու ձի (հեծելազուր), առ և տուր (դնելու և վաճառելու տնտեսական գործունեություն) բաղձյուսական հարադրությունները և շատ այլ անիսկական բարդություններ։

Մյուս կողմից՝ կան իսկական բարդություններ, որոնք բոլորովին էլ իրենց բաղադրիչներից ավելի իմաստ չեն արտահայտում, ինչպես՝ փառամուտ, լայնաթևակ, խառնաշփոթ, երկաբառե, վայելագեղ, մշտադալար, հեզանկուն, տխրադալուկ, թախծանուշ, լուսապայծառ, մշտաբթուն, սրտանոթային, հերարծակ, փաղցրանուշ և այլն։

Ինչ վերաբերում է հարադրական բարդություններին, որոնց մեծ մասը (հարադրական բայերը) դարձվածաբանական միավորներ են, ապա ինքնին հասկանալի է, որ նրանք արտահայտում են բոլորովին նոր իմաստ, քան ունեն բաղադրիչներն առանձին-առանձին։ Օրինակ՝ սիրտ տալ, աչքով անել, գլուխ տալ, ձեռք առնել, ջուր ծեծել և այլն։

Նշենք, որ դարձվածաբանական արժեք չունեն մի շարք հարադրական բայեր, որոնց մեջ բաղադրիչները պահում են իրենց բառային իմաստները։ Այդպիսի բայերի հարադիր մասն արտահայտում է տարածական հարաբերություն, ինչպես՝ դուրս գալ, մտնել, ներս մտնել, վայր ընկնել, վեր ելնել, ընդառաջ գնալ, առաջ ընկնել և այլն։

Դրա հետ միասին մի շարք բառեր (բացճակատ, բացբերան, փակբերան, տափգլուխ, տափալուն, պարզեհես, սեհեհես, սևսիրտ և այլն), եթե հարցին մոտենալու լինենք հիշյալ սկզբունքով, կարելի է համարել թե՛ անիսկական և թե՛ իսկական, որովհետև, եթե վերցնենք բառերի ուղղակի իմաստները, ապա դրանք կլինեն անիսկական (կցական) բարդություն, իսկ փոխաբերական իմաստների դեպքում՝ կունենանք իսկական բարդություններ։

Այսպիսով, իսկական բարդությունն անիսկականից տարբերող իմաստային առանձնահատկությունը հանդես է դալիս նաև անիսկական բարդությունների գերակշռող մասում։

3. Իսկական բարդության մյուս առանձնահատկությունն այն է, որ նրա բաղադրիչների շարահյուսական հարաբերությունը մթաճանաչ է և անմիջականորեն չի դրսևորվում։ Մինչդեռ բարդության բաղադրիչների շարահյուսական կապի մթաճանաչ հանդես է դալիս ոչ միայն իսկական (ուրվանկար, գոյատեել, նկարագրել, գիտածոդով, ծաղրանկար), այլև անիսկական բարդություններում (կեսգիշեր, կեսօր, թևածել, շուռ գալ, տեղի ունենալ, ծառ լինել և այլն)։ Դեռ ավելին, շատ ավելի հեշտ է որոշել գիտածոդով, ծաղրանկար, զվարթաձայն, վարդաձայն, շիրմափար և շատ ուրիշ իսկական բարդությունների շարահյուսական կապը (որոշիչ որոշյալ), քան գործ ածել, պար գալ, ուշքի գալ, վիզ

առնել, փուն մտնել, ծունկ շոփել հարադրական բարդությունների բաղադրիչների, որովհետև նրանցում շարահյուսական հարաբերության զգացումը այնքան մթազնած է, որ շատ աղոտ կերպով են ըմբռնվում հարադիրները որպես տեղի պարագա:

4. Իսկական բարդության բաղադրիչները մեծ մասամբ միանում են և հոդակապով³ (սրտաբույս, վշտաբեկ, հողագուրկ, հեզաճկուն):

Իսկական բարդության բաղադրիչները միացնող և հոդակապը մասամբ հանդես է դալիս նաև անիսկականների մեջ. ինչպես՝ մեծամեծ, նոբանոբ, մոտամոտ, ջեմաջեմ, շարաշար և այլն⁴:

Ուրեմն բաղադրիչների հոդակապով միանալը ևս իսկական բարդության մենաշնորհը չէ: Բացի այդ իսկական բարդությունը կարող է ձևավորվել հոդակապով (ջրկիր, պատշառ, ֆարտաշ, խոռոներամ, գաղթօջախ, սղոցատամ, մշտուրախ, հերաճաճակ և այլն):

5. Իսկական բարդությանը բնորոշ է համարվում նաև հնչյունափոխությունը⁵: նրա առաջին բաղադրիչի վերջին վանկի ձայնավորը (ի, ու, է) մնալով անշեշտ, մեծ մասամբ փոխվում է. ինչպես՝ երկիր-երկրագունդ, թռչուն-թռչնոց, պարտեզ-պարտիզպան և այլն:

Հնչյունափոխված ձևեր ունենում են նաև կրկնավորները և նրանցով կազմաված կցականները. օրինակ՝ մարդ-մուրդ, սուտ-մուտ, մանր-մունր, կսկիծ, ծամծմել, կկու և այլն:

Այսպիսով, վերոհիշյալ հատկանիշները՝ բաղադրիչներից ավելի իմաստ արտահայտելը, բաղադրիչների միասնական լինելը, նրանց շարահյուսական կապի մթազնումը, հոդակապով ձևավորվելը, հնչյունափոխությունը բնորոշ են իսկական բարդություններին, բայց դրանք հանդես են գալիս նաև անիսկական բարդությունների մեծ մասում:

Նշանակում է բարդ բառերի դասակարգումը իսկականների և անիսկականների ոչ միշտ է իրեն արդարացնում, քանի որ նրանց սահմանազատումը հըստակ չի կատարված: Հաճախ դասակարգվող միավորները հիմնական հատկանիշներով իրար չեն հակադրվում, մինչդեռ դրանք բարդության տարբեր տեսակներ են և պետք է ունենան առնվազն մեկ տարբերակիչ հատկանիշ, որը, սակայն, չի երևում իսկական ու անիսկական բարդությունները հակադրելիս:

Հետևաբար, այն տարբերակիչ հատկանիշները, որոնք բնորոշ են իսկական բարդություններին, հաճախ հանդես են գալիս անիսկական բարդությունների մեջ: Դրա պատճառն այն է, որ բարդ բառերի դասակարգման սկզբունքը ճիշտ չէ: Բարդության տեսակները որոշելիս ճիշտ չի ընտրված տարբերակիչ հատկանիշը: Ավելի նպատակահարմար է բարդ բառերը դասակարգել ելնելով նրանց կառուցվածքային առանձնահատկություններից, այն բանից, թե բաղադրիչներն ինչպե՞ս են հանդես գալիս միասին՝ որպես մեկ բառական ամբողջություն, թե՞ անջատ (պահպանում են իրենց ձևական անկախությունը, բառային շեշտը և միմյանցից անջատվում են՝ աղտասանական դադարով):

Ըստ այդմ բարդ բառերը կարելի է բաժանել երկու ընդհանուր տեսակի՝ համադրական (առանձնասենյակ, թրաշուշան, այսօր, տասնհինգ) և վերլուծական (փուն մտնել, երես տալ, առատ-առատ, արագ-արագ):

3 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 189:

4 Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955, էջ 152:

5 Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 189:

Համադրական բարդությունները հանդես են դալիս միասնաբար և ունեն բառային մեկ միասնական շեշտ: Իսկ վերլուծական բարդության բաղադրիչները հնչապես մեկ բառային ամբողջություն չեն ներկայացնում, նրանք իրարից բաժանվում են արտասանական դադարով և պահում են իրենց բառային շեշտը՝ գրային առումով ներկայացնելով առանձին միավորներ:

Համադրական բարդությունների խմբին կարելի է դասել իսկական բարդությունները և կցականները: Բարդության այս տեսակի բաղադրիչները ի տարբերություն վերլուծականների, հանդես են գալիս միասնաբար: Ամբողջ բարդությունն ունի մեկ շեշտ, որը հայերենի ընդհանուր կանոնի համաձայն, ընկնում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա (ամբալ՝տ, ջրաշուշա՛ն, սրբա-տա՛շ, կեսօ՛ր և այլն): Միայն առանձին դեպքերում կցականները, բացի հիմնական շեշտից, ունենում են թույլ շեշտ. ինչպես՝ ա՛նցուղա՛րձ, ա՛ռևտո՛ւր, կե՛րուխո՛ւմ:

ա) Իսկական բարդություններն աչքի են ընկնում բաղադրիչների միասնականությամբ, կորցնում են իրենց թե՛ ձևական և թե՛ իմաստային անկախությունը և կազմում են մեկ բաղադրյալ բառ:

Ինչպես բարդությունների մյուս տեսակները, այնպես էլ իսկական բարդությունները կարող են առաջանալ բառերի շարահյուսական կապակցություններից: Իսկական բարդության բաղադրիչների շարահյուսական կապը կարող է լինել թե՛ համադասական և թե՛ ստորադասական: Այսպես՝ քաջաբի, ճիսա-քանչ, վայելչագեղ, ամբալուռ և այլ բարդությունների բաղադրիչները կապված են համադասական հարաբերությամբ, իսկ կալվածելի, սրտաբուխ, լիալուսին, լայնաթիկունք և այլ բաղադրություններում բաղադրիչների հարաբերությունը ստորադասական է:

Բարդության մեջ բաղադրիչները կարող են միմյանի հոդակապով և առանց հոդակապի: Ժամանակակից հայերենում հոդակապի դեր է կատարում ա ձայնավորը: Հոդակապը մեր լեզվում հանդես է գալիս ավանդաբար, սովորության ուժով: Դժվար է նշել մի օրինք, որը ցույց տա, թե ո՛ր դեպքում կարելի է օգտագործել հոդակապ և ո՛ր դեպքում՝ ոչ: Հոդակապի առկայությունը ժխտող միայն մեկ օրինք կարելի է նշել՝ բարդության երկրորդ եզրը ձայնավորով սկսվելիս հոդակապ չի դրվում՝ մշտուրախ, ժպտեհես, գաղթօջախ, լուսեհես, և այլն: Բացառություն են կազմում ամեն բառով կազմվող ձևերը (ամենաընտիր, ամենաուրախ, ամենաիրական):

Ժամանակակից հայերենում շատ քիչ դեպքերում հանդես է գալիս ե հոդակապ. ինչպես՝ այցետոմս, հաշվեկշիռ, հաշվեկատ, ծաղկեփունջ, հաշվեմատյան: Հայերենում այն ունի երկու դրսևորում.

1) Մի դեպքում ե հոդակապը ա-ի հնչյունափոխության արդյունք է (այգի-ա-պան-այգեպան, գինի-ա-տուն-գինետուն, ոսկի-ա-պսակ-ոսկեպսակ և այլն):

2) Մյուս դեպքում այն համաբանության արդյունք է, որն առաջացել է վերոհիշյալ ձևերի նմանակությամբ (հաշվեկշիռ, հաշվեկատ, հաշվեմատյան, այցետոմս, ծաղկեփունջ և այլն):

Իսկական բարդությունները կազմվում են տարբեր խոսքի մասերի բաղադրումից: Ավելի տարածված են գոյականով և ածականով, գոյականով և բայարմատով, երկու գոյականների բաղադրումով կազմված իսկական բար-

դուժյունները (անձեռախառն, հոգեխռով, սրտաբաց, մաքդասեր, կարկտահար, ոսկեզօծ, ձյունակույտ, լեռնաշղթա, դիմագիծ և այլն)։

բ) Կցական բարդությունների մեջ բաղադրիչները նույնպես միասնաբար են հանդես դալիս, բայց նրանց ձևական և իմաստային անկախությունն ավելի զգալի է, քան նախորդների մոտ։ Օրինակ՝ հորեղբայր, եռուզեռ, այսօր, այդպես, ծայրեծայր և այլն։

Շատ կցականներ էլ կազմված են կրկնավոր և հարադրական բարդություններից. ինչպես՝ բարբառ, կսկիծ, ծայրեծայր, խառնի-խառն, առևտուր, կերուխում, եռուզեռ, վազվզել, փայլփլել, ձգձգել և այլն։

Կցական բարդությունները նույնպես կարող են կազմվել տարբեր խոսքի մասերի համադասական և ստորադասական շարահյուսական կապակցություններից. այդպիսիք են՝ եռուզեռ, կերուխում, տասնհինգ, առևտուր, հորեղբայր, այստեղ, կեսօր և շատ ուրիշ բարդություններ։

Համեմատաբար սակավադեպ են դերանուններով, բնաձայնություններով, ձայնարկություններով կազմված կցական բարդությունները. դրանցից են՝ այն-ինչ, այսինչ, վայվայ, հայհայ, կկու, ախուվախ։ Ժամանակակից հայերենի համար հնացած են դերանվանական ու բայական բաղադրիչներ ունեցող կցականները, որոնք միանում են շաղկապով (ինչևէ, ովևէ), ինչպես նաև զուտ բայական բաղադրիչներով և շաղկապով կազմվածները՝ ելևէջ, երթևեկ, առևտուր։ Իսկ մյուս խոսքի մասերը շատ ավելի արդյունավետ են կցականների կազմության մեջ։

Վերլուծական բարդ բառեր են հարադրական բարդությունները և կրկնավորները։ Այս բարդության բաղադրիչները պահում են իրենց ձևական անկախությունը, բառային շեշտը և իրարից անջատվում են արտասանական դադարով. օրինակ՝ կերուխում, հայր ու որդի, մեկ առ մեկ, սիրտ տալ, պար գալ և այլն։ Վերլուծական կազմությամբ բարդությունների բաղադրիչներն իրար հետ միանում են շաղկապներով, նախդիրներով. ինչպես՝ առ և տուր, հայր և որդի, ժամանակ առ ժամանակ, մերթ ընդ մերթ և այլն։ Իսկ ուրիշ դեպքերում կապող այս միջոցներից ոչ մեկն էլ հանդես չի դալիս և գրավոր խոսքում բարդության բաղադրիչների ձևական անկախությունն արտահայտվում է նրանց անջատ դրությամբ կամ միացման գծիկով. ինչպես՝ ձեռք տալ, ծեծ ուտել, երես տալ, արագ-արագ, առանձին-առանձին և շատ ուրիշ բարդություններում։

Հարադրական բարդությունների մեջ առանձին խումբ են կազմում բաղահյուսական հարադրությունները, որոնց բաղադրիչները շատ հաճախ համանիշ կամ էլ իմաստով իրար մոտ բառեր են և իրար հետ միանում են շաղկապով, գծիկով, (վեր ու վար, ահ ու դող, հիսուն-վաթսուն, հետ ու առաջ)։ Հաճախ այսպիսի բարդության բաղադրիչները կարող են ունենալ հակառակ իմաստ, որը բարդության մեջ չի պահպանվում և բարդ բառն արտահայտում է բազմակիություն։ Դրանցից են՝ հետ ու առաջ, աջ ու ձախ, վեր ու վար, ներս ու դուրս և այլն։

Ըստ բաղադրիչների բնույթի հարադրական բարդությունները կարող են լինել բայական և անվանական։

ա) Անվանական հարադրություններ կազմվում են գոյականով, ածականով, թվականով, մակբայով, շաղկապներով և եղանակավորող բառերով. օրինակ՝ ծալի ու ծիծաղ, ձյուն-ձմեռ, գոռում-գոչում, աղմուկ-աղաղակ, լոկկ-մնջիկ, կարմիր-կանաչ, քաց ու չուր, ծանր ու թեթև, չորս-հինգ, վեց-յոթ, տաս-

բաժնի, դեռ ու դեռ, վեր ու վար, ետ ու առաջ, կամ թե, միայն թե, քան թե, ապա թե ոչ, կարծես թե, ասես թե, մանավանդ որ և այլն:

բ) Բայական հարադրությունները երկու տեսակ են՝ հարադրական բայեր և զուգահերական բայեր: Առաջինները կազմվում են մի բայից և հարադիր բաղադրիչից: Հարադիր բաղադրիչը կարող է արտահայտվել գոյականով, ածականով, թվականով, դերանունով, մակբայով, ձայնարկությամբ և բնաձայնական բառերով. օրինակ՝ միտք անել, դարդ անել, զուլխ բերել, արծաճի լինել, անպատիվ անել, ազատ լինել, մեկ անել, շուրս անել, հագար անել, ներս մտնել, դուրս գալ, առաջ գնալ, ախ քաշել, վայ տալ, օֆ անել, տրգ անել, հաֆ անել, փիշտ անել:

Բայական հարադրությունների մեջ առանձնանում են զուտ բայական բաղադրիչներից կազմված բարդությունները՝ զուգահերական բայերը, ինչպեսիք են՝ թողնել-հեռանալ, պահել-մեծացնել, ծլել-ծաղկել, գուզվել-գարդարվել և այլն:

Վերլուծական բարդություններ, են նաև կրկնավոր հարադրությունները (կրկնավորներ), որոնք կազմվում են արմատի կրկնությամբ: Նրանց բաղադրիչները տարբեր խոսքի մասեր են, որոնք իրար հետ միանում են նախդիրներիով, շաղկապներով՝ մեկ առ մեկ, ես ու ես, ինձ ու ինձ, իսկ և իսկ, Ավելի հաճախ սրանք անջատվում են իրարից արտասանական դադարով, որը գրության մեջ արտահայտվում է գծիկով. ինչպես՝ անսակ-տեսակ, սուր-սուր, խուժ-խուժ և այլն:

Կրկնավորներն ունեն իմաստային առանձնահատկություններ: Նրանք կարող են արտահայտել գործողության տևականություն (գնալ-գնալ, վազել-վազել, արմանալ-գարմանալ), քանակի մեծացում, հոգնակիություն (օսկոր-մոսկոր, մարդ-մուրդ, ալաս-փալաս), բաշխում (նինգ-նինգ, խուժ-խուժ, մեկ-մեկ), իմաստի սաստկացում (շատ-շատ, սուր-սուր, մեծ-մեծ): Բառակազմության այս տեսակը, ինչպես և նախորդները, կարևոր դեր են կատարում հայոց լեզվի բառային կազմը հարստացնելու գործում:

КЛАССИФИКАЦИЯ СЛОЖНЫХ СЛОВ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Р. Х. МКРТЧЯН

Резюме

Вместо существующего ныне мы предлагаем разделение сложных слов в армянском языке на синтетические и аналитические.

Компоненты синтетической конструкции выражаются слитно и имеют одно словесное ударение, которое, согласно общему закону армянского языка, падает на гласную последнего слога.

Компоненты аналитической конструкции фонетически не представляют словесного единства. Они разделяются друг от друга паузой и сохраняют свое словесное ударение, графически представляя собой отдельные единицы.